ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ԳՀԾՁԲ-21-10/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան «26» Ապրիլի 2021թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Ս.Սահակյանի, ով գործում է ՀՀ պաշտպանության նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ա-2» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Ոսկանյանի, ով գործում է «Ա-2» ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով **19.02.2021թ.** կնքված N **ԳՀԾՁԲ-21-10/2-1** գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը (ֆինանասական միջոցները նախատեսվել են ՀՀ կառավարության 30.12.2020թ. N 2215-Ն որոշմամբ, Ծանուցում N 7-ՊՆ 06.03.2021թ), փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով **հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայությունների** (այսուհետ՝ Ծառայություն) գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն N 1 և N 2 Հավելվածների:

1.2 Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված տեխնիկական բնութագրի պահանջներին համապատասխան Ծառայություն՝ Համաձայնագրի N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցով նախատեսված ծավալներով և ժամկետներում, իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ Ծառայությունը և վճարել դրա համար՝ Համաձայնագրի N 2 Հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված չափերով և ժամկետներում:

2. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1 Համաձայնագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության **առավելագույն գինը կազմում է 900 000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները: Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

2.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, այն ստորագրվելուց հետո 15 բանկային օրվա ընթացքում՝ Համաձայանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներում, բայց ոչ ուշ, քան մինչև 24.12.2021թ.:

3. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

3.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

3.2 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով նախատեսված մյուս դրույթները թողնվում են անփոփոխ:

3.3 Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.4 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 և N 2 Հավելվածները հանդիսանում են Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

3.5 Համաձայնագրով նախատեսված ծառայությունների դեպքում պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԿՇ և ԱԲ վարչությունը:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ա-2» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք.Երևան, Շրջանային 2/2
ՀՀ ՖՆԱ գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2470100029280000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01804822
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
	Ա. ՈՍԿԱՆՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-21-10/2-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության					
Հ/հ	CPV կոդ	Անվանումը	չափման միավորը	Առավելագույն գինը/ՀՀ դրամ	մատուցման ժամկետը
1	50311110/501	Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն	Դրամ	900 000	ՊՆ ԿԾ և ԱԲ վարչության հայտերի հիման վրա՝ 3-4-րդ եռամսյակներ բայց ոչ ուշ քան 15.12.2021թ.

Հաշվիչների տեղափոխումը զորամասից նորոգող կազմակերպություն և հետ զորամաս կատարվում է ՀՀ ՊՆ միջոցներով և հաշվին

Հավելված N 2
N ԳՀԾՁԲ-21-10/2-1 պայմանագրի
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության				
Հ/հ	CPV կոդ	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021թ.-ին՝ ըստ եռամսյակների, այդ թվում՝	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ, բայց ոչ ուշ, քան 24.12.2021թ.
1	50311110/501	Հաշվիչների և հաշվողական սարքերի պահպանման և վերանորոգման ծառայություն	450 000	900 000

**Վճարման ենթակա գումարները ներկայացված են առողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության [illegible]

ԿԱՏԱՐՈՂ

«Ա-2» ՍՊԸ-ի տնօրեն

Ա. ՈՍԿԱՆՅԱՆ